«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Գոհար Խաչատրյան

Ուսումնական հաստատություն՝ Ջրաշենի միջնակարգ դպրոց

Երևան 2022

Ներածություն

Ի՞նչ է հայրենասիրությունը և ինչպես այն դաստիարակել գեղարվեստական ստեղծագործության միջոցով:

<<Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկ_րանքն է ու ինքնուրույն դառնալու,տիրելու, տիրապետելու երջանկությունը>>:(Լ. Տոլստոյ)

Արժեհամակարգ հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ունի ընկալման մեծ շրջանակ: Ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման ու զարգացման համար: Արժեքների նշված համախմբերից որևէ մեկին անհնար է գերապատվություն տալ, քանի որ նրանցից յուրաքանչյուրը լրացնում, ամբողջացնում է մյուսին: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Հատկապես անգնահատելի է լեզվի և գրականության դերը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենաիրություն, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացումը, որոնք ակտիվ ճանաչողական գործունե-

ության պայմաններում վերածվում են համոզմունքների ու կարողությունների:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները՝աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով:

կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարըստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները: Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ այն դրսևորվում է թշնամու մոտ: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձրգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ արժեքային համակարգի կարևոր պայմաններից են: Արժեքային համակարգը նախատեսում է, որ յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

. Լինի հայրենասեր և պատրաստ լինի հայրենիքի պաշտպանության գործին:

. Կարևորի ազգային-պետական մտածողության և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում և կամք:

. Ունենա ազգային ինքնագիտակցություն:

. Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը:

. Գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը:

.Ունենա պատասխանատվության և լավատեսության զգացում:

.Գիտակցի, որ կյանքում իր համար կարևոր արժեքներից են գիտելիքը, աշխատանքային հմտությունները, մանագիտական հմտությունն

Այսպիսով՝արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերագույն խնդիրներից մեկն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Էպոսի դերը հայրենասիրության ազգային արժեհամակարգի գործում

<<Էպոսը հայ ցեղի ապրած կյանքի և հոգեկան կարողություն-ների հոյակապ գանձարանն է ու իր մեծության անհերքելի վկայությունն է աշխարհի աշխարհի առջև>>:

Հովհաննես Թումանյան

<<Սասունցի Դավիթ>> էպոսը

Ազգային էպոսը նկարագրում է տվյալ ազգի կամ էթնոսի ծագումը, զարգացումը և պատմությունը: Այն նաև օգնում է փոխանցել ազգի ինքնորոշման կամ ինքնաճանաչման դրվագ-ները և բազմաթիվ ազգային խորհրդանիշների առաջացման պատմությունը:

Հայկական մշակույթում <<Սասնա ծռեր>> ազգային էպոսն առանձնահատուկ տեղ է գրավում: Նրա գաղափարական բովանդակության հիմնական առանցքը հայրենասիրությունն ու ծողովրդասիրությունն է:Այն ծնունդ է առել Հայկական լեռնաշ-խարհի ամենագողտրիկ անկյուններից մեկում՝ Սասունում: Այստեղ են գտնվում հայտնի Ծովասար և Մարաթուկ լեռնագա-գաթները: Սասունցիներն աչքի են ընկել միայն իրենց տեսակին հատուկ համառությամբ, հայրենիք ու հող պաշտելով, մի փոքր էլ <<ծուռ>> լինելով: Հայոց ազգային էպոսը փոխանցվել է բա-նասացների ու վիպասացների միջոցով՝ տարբեր պատումների ձևով:

Բոլոր ազգային էպոսներն իրենց առջև դնում են պետականութ-յան խնդիրը. եթե այն չունի պետականության խնդիր, ապա այն էպոս համարվել չի կարող: Հայկական ազգային էպոսում պե-տության և պետականության խորհրդանիշը համարվում է Սա-նասարի ու Բաղդասարի կողմից հիմնած բերդը որով և հիմք է դրվում Սասնա տոհմին ու Սասնա տանը: Հայկական էպոսում հիշատակվում են թագավորն ու իշխանը, հոգևորականն ու ռամիկ ժողովուրդը: Սակայն նրանք բոլորն իրենց նիստ ու կա-ցով, բարքերով ու կրթությամբ գրեթե չեն տարբերվում: Թագա-վորն ու ժողովուրդը մտերմիկ հարաբերությունների մեջ են միմ-յանց հետ: Էպոսի դյուցազուն հերոսները ոչ միայն պայքարում են օտար նվաճողների դեմ, այլև օգնում են գյուղացուն առօրյա աշխատանքում: Նրանք օժտված են գերմարդկային հզոր ուժով և մեծանում են ոչ թե տարով,այլ ժամ առ ժամ: Նրանք իրենց ուժը երբեք ի չար չեն գործածում, այլ աչքի են ընկնում իրենց բարությամբ , միամտությամբ:

<<Սանա ծռեր>> կամ <<Սասունցի Դավիթ>> էպոսը ձևա -վորվել է 8-10-րդ դարերում տեղի ունեցած պատմական մեծ իրադարձությունների ընթացքում՝ որպես արաբ զավթիչների դեմ հայության մղած տևական պայքարի և նվաճված անկա-

խության գեղարվեստական արտահայտություն: Էպոսի տեղծ-
ման հստակ թվականը հայտնի չէ, քանի որ այն գալիս է ժամա-
նակի խորքից և ունի պատմական խոր ակունքներ: Նրա
ասացողները էպոսը պատմել են հայկական տարբեր բար-
բառներով, մեծ մասամբ մոկաց, մշո, սասնա, արարատյան:
Էպոսն արտացոլում է հայ ժողովրդի բարոյական ըմբռնումնե-
րըն ու ազատասիրական ոգին:

Դյուցազներգությունը բաղկացած է չորս ճյուղից՝<<Սանա-
սար և Բաղդասար>>, <<Մեծ Մհեր>>, <<Սասունցի Դավիթ>>,
<<Փոքր Մհեր>>: Ճյուղերը կոչվում են գլխավոր հերոսների ա-
նուններով և ներկայացնում նրանցից յուրաքանչյուրի քաջա-
գործությունները, մարդկային, բարոյական վեհ հատկանիշները:
Նրանց բնավորության առաջնային ու ակնառու հատկանիշը
հայրենասիրությունն է ,որն արտահայտվում է հերոսների
առօրյայում, կենցաղում և նրանց յուրաքանչյուր քայլում:
Նրանք հայրենասիրության հատուկ դասեր չեն առնում. հայրե-
նասիրությունը նրանց արյան մեջ է, հայրենասիրության զգա-
ցումը նրանք ստացել են մայրական կաթի հետ: Սա խոսում է
այն մասին, որ հայ կինը, հայ մայրը իր քաջությամբ ու հայրե-
նասիրությամբ չի զիջում իր ամուսնուն, որդուն, որևէ տղամար-
դու: Ասվածի փայլուն ու վառ օրինակ են էպոսում հանդիպող
առաջին կին հերոսուհին՝ Ծովինարը, Քառուն Դեղձուն Ծամը,
Արմաղանը, Խանդութը, Գոհարը: Ծովինարը համաձայնում է
ամուսնանալ կռապաշտ Խալիֆի հետ, որպեսզի փրկի իր անմեղ
հայրենակիցներին, իր պատճառով զոհեր չլինեն.
- Ես մեկ ջան եմ, էրթամ,կորսըվիմ,
Քանց մեր Հայաստան էրկիր ավերվի,
Էն հազար-հազար հոգիք կորուսանեն:

Մեկ հոգու պատճառով ազգ մի՛ տանք կտրել.

Չէ՛, էդ մե՛կ հոգին թող էրթա:

Ծովինարի զավակները՝ Սանասարն ու Բաղդասարը, որ ջրային ծագում ունեն, էպոսում աչքի են ընկնում մարդասիրությամբ, իրենց անսովոր ուժով, քաջությամբ, ծնողասիրությամբ, մեծերի նկատմամբ հարգալից վերաբերմունքով, առավել ևս աչքի են ընկնում հայրենասիրությամբ: Իրենց բերդը կառուցելուց առաջ նրանք տներ են կառուցում այն քառասուն ընտանիքների համար, որոնց իրենց հետ բերել էին նոր բնակատեղի,նը-րանց ապահովում են սնունդով, ապահովում նրանց անվտանգությունը: Աշակերտներին ներկայացնելով հայրենասիրության գաղափարը, պետք է այստեղ ընդգծել՝ որ հայրենիք հասկացության մի մասնիկն էլ ժողովրդասիրությունն է,նրա հոգսերով ապրելն ու հարկ եղած դեպքում՝ օգնելը: Երկու եղբայրներն էլ աչքի են ընկնում իրենց պարզությամբ, ազնվությամբ՝ հաճախ թշնամու դեմ ելնելով մենակ՝իրենց վրա վերցնելով հարվածը: Նրանք ազատում են Կանաչ քաղաքի բնակիչներին ջրի ակունքը փակող հրեշից, վերադարձնում բնակիչներից վերցրած քարերը, որոնք որպես զենք էին տարել: Եվ վերջապես նրանք սպանում են Բաղդադի Խալիֆին, որը չարիք էր դարձել Հայոց աշխարհի համար: Սանասարն ամուսնանում է Պոնձե քաղաքի արքայադուստր Քառսուն Դեղձուն Ծամի հետ, որն իր քաջությամբ ու խիզախությամբ հետ չէր մնում Սանասարից: Վերջինիս մահից հետո նա, հեծած Քուռկիկ Ջալալին, պաշտպանում էր Սասունի սահմանները թշնամիներից: Սանասարն ու Դեղձունն ունենում են երեք որդի՝Վերգոն, Ձենով Հովանը և Միերը: Նրանցից միայն Միերն է ժառանգում հոր ուժն ու հզորությունը: Նրա ուժն ու հզորությունը զարմացնում էր բոլորին, բայց նա երբեք իր ուժը չի գործադրում խեղճի, տկարի դեմ. նրա թշնամին չարն է, ավազակն ու իր հայրենիքի անվտանգությանն սպառնացողը: Սասունին սպառնում է սովը: Հայտնվել էր մի առյուծ, որը փակել էր հացի ճանապարհը: Ոչ ոք չէր համարձակվում գնալ հսկա գազանի դեմ, մինչդեռ Միերը անահ ու անզեն ելնում է առյուծի դեմ՝հանձնարարելով իր հետ եկողնե-

ին՝ չմիջամտել, ապա իր վրա եկող առյուծին երկու կես է ա-
նում.

Միեր կանչեց. –Հացն ու գինին, տեր կենդանին:
Կանչեց, մի ձեռ թալեց առյուծի վերի ծնոտ,
Մյուս ձեռ թալեց ներքի ծնոտ,
Ճղեց էդ առյուծ մեջտեղեն,
Արեց էնոր էրկու կտոր:
Մեկ դրեց ճամփու էս դին, մեկէլ՝ էն դին:

Այս դեպքը մեկ անգամ ևս հաստատում է, որ Միերը արժանի է իր հոր զավակը կոչվելուն և արժանանում է Քուռկիկ Ջալալուն տիրելուն, Թուր Կեծակին կրելուն:Սասունցիները միաձայն նրան ընտրում են իրենց երկրին կառավարիչ:
Սանասարի մահից հետո Սասունը հարկատու էր դարձել Մըսրի տիրակալ Մելիքին: Երբ հերթական անգամ արաբ հարկահանները գալիս են Սասունից հարկը տանելու, Միերը հրաժարվում է հարկը վճարել: Ձենով Հովանը փորձում է համոզել Միերին, որ վերջինս զիջի Մելիքին, բարեխոսի, որ պակասեցնի հարկը: Սակայն Միերը համաձայն չէ, նա չի ուզում, որ Սասնա հարստությունը ուրիշը վայելի: Դրա համար նա պատրաստ է կռվել Մելիքի դեմ: Հանդիպման առաջին իսկ պահից Մելիքի սիրտը ահով է լցվում:

Միեր բարև տվեց: Մըսրա Մելիք էդոր դեմքիցըն զարզնդավ:
Չը կարցավ, թե բարև առներ իրեն վախից:
Ու ինք միտ վե ասաց.
<<Մագյար հըմլա մարդ է՞լ կըլնի աշխարհ>> :
Կռվի ժամանակ Մելիքը հասկանում է, որ ինքը չի կարող հաղթել Միերին: Նա առաջարկում է Միերին հաշտվել ու հարկ եղած դեպքում միմյանց օգնել: Ու թե իրենցից որևէ մեկը շուտ մեռնի, մյուսը նրա ընտանիքին տիրություն անի: Այս առաջարկը բարի դիտավորություններից ելնելով չէ, որ առում էր Մելիքը, նա այդպես վարվում է վախից:

Մելիքի մահից հետո Միհրը, խոստումին համաձայն, մեկնում է Մըսր, չնայած այն հանգամանքին, որ կինը՝ Արմաղանը, դեմ էր: Դա թշնամու հերթական խորամանկ քայլն էր, որին ընդառաջ է գնում Միհրը՝չպատկերացնելով հետևանքները, իսկ երբ հասկանում է, արդեն ուշ էր: Նա վերադառնում է Սասուն, մինչդեռ Արմաղանը երդվել էր Աստծո առաջ՝ չներել Միհրին: Սակայն Սասունն անտեր թողնել չէր կարելի: Միհրն ու Արմաղանը իրենց կյանքի գնով Սասունին ժառանգ են պարգևում՝ աշխարհ բերելով Դավիթին, իսկ իրենք նույն օրը մեռնում են: Սա հայրենասիրության ու անձնազոհության վառ օրինակ է, որ հատուկ է միայն իսկական հայրենասեր մարդկանց:
Դավիթի ծնունդով սկսվում է էպոսի երրոդ ճյուղը: Էպոսում Դավիթն ամենից սիրված հերոսն է: Նա էլ հոր նման ուժեղ ու հզոր է, ազնիվ, միամիտ, բայց անողոք է թշնամու նկատմամբ: Դավիթը , ինչպես իր հայրը, հրաժարվում է հարկատու լինել Մըսրին, որի համար էլ Մելիքը կռվի է ելնում Սասունի դեմ: Այստեղ տեղին է հիշել մեծն Խորենացու <<Քաջերի սերունդները քաջերն են>> ասույթը: Դավիթը ոչ միայն հետ չի մնում հորից իր քաջությամբ ու հայրենասիրությամբ, այլև շատ տեղերում գերազանցում է նրան: Մելիքը հկա բանակով գալիս է Սասունի վրա: Նա քնում է վրանում, իսկ ժողովրդին ուղարկում է կռիվ: Դավիթը կռվի է ելնում իր գերդաստանով: Ծանր և օրհասական պահերին նա իր ժողովրդի կողքին է, նա է առաջնորդում իր հայրենակիցներին: Սակայն Դավիթը արնախում ու դաժան չէ. նա լսում է Մելիքի բանակից ծերունու խորհուրդը:
_ Աղքատ ու խեղճ մարդ են էդոնք.
Մըսրա Մելիքն է զոռով բռնե, բերե,
Մըսրա Մելիքն է քո դուշման,
Գընա իր հետ կռիվ արա:
Դավիթը կռվի է բռնվում Մելիքի հետ ու սպանում նրան:
Մելիքի մոր և քրոջ խնդրանքով նա երկու զարկերը բաշխում է նրանց, քանի որ նրանք ժամանակին մայրություն ու քույրութ_

յուն էին արել իրեն: Սակայն հայրենիքը վեր է ամեն ինչից, և նա անզիջում է թշնամու նկատմամբ: Վերջին զարկով նա վերջ է տալիս Մելիքի կյանքին: Ըստ պատումներից մեկի՝ Իսմիլ խաթունը խնդրում է Դավթին մնալ ու կառավարել Մըսրում:
-Դավի՛թ դո՞ր ես եթում.
Մըսր նստի, թագավորություն արա:
Սակայն Դավիթը չէր կարող Մըսրա թագավոր դառնալ նաև այն պատճառով, որ դա կնշանակեր ծառայել օտար երկրին, իսկ իր երկիրը մատնել մոռացության: Էպոսի ստեղծողները դատապարտում էին այն սասունցիներին, որոնք ծանր օրերին փախել էին հայրենի երկրից և հաստատվել օտարության մեջ: Դա դիտվել է դավաճանություն հայրենիքի նկատմամբ: ----
_Սասնա մարդ ի՞նչ իրավունք ունի,
Էրթա հուրուշ տեղ պնագվի:
Լինելով ամենասիրելի կերպարը էպոսում, ժողովուրդը Դավի_թին օժտել է ամենադրական հատկանիշներով՝ չմոռանալով նրրա թերությունները, որոնք ներկայացվում են հումորով: Դավիթը սիրում է իր ժողովրդին, հասկանում նրա ցավն ու խնդիրները, քանի որ նա ապրել է ժողովրդի մեջ, նրա ծոցից է դուրս եկել: Խանդութի մոտ գնալիս ճանապարհին նա հացի է նստում ռանչպարների հետ և ուտում նրանց ամբողջ շաբաթվա հացը: Բայց նա երախտամոռ չէ. այն գործը, որ գյուղացիները պիտի անեին մեկ շաբաթում, Դավիթը անում է մեկ օրում: Դավիթի կյանքը հանգիստ ու անհոգ չէ: Ընտանիք կազմելուց հետո նա թողնում է կնոջը ու շարունակում պաշտպանել երկրի սահմանները, նրա բնակիչների անդորրը: Դավիթը, չճանաչելով որդուն, կռվի է բռնվում նրա հետ, իսկ երբ ճանաչում է, անիծում է նրան, ասելով՝

Մհե՛ր, որ դու հետ ինձի կռիվ արիր,
Ինձի ամանչեցրիր,
Կանչեր եմ քաղցրիկ աստված,

Անմահ ըլնիս, անժառանգ:
Դավիթը սիրում է իր որդուն և գիտակցում է անեծքի հետևանքը, բայց վիրավորանքն իր պատվի հանդեպ այնքան մեծ է, որ Դավիթը չի հանդուրժում:
Էպոսի չորրորդ ճյուղը ներկայացնում է Փոքր Միհրը: Նա նույնպես դյուցազուն է, հայրենասեր, անձնազոհ: Նա նույնպես, ինչպես իր հայրը, պապերը, իր կյանքը նվիրում է հայրենիքին, պաշտպանում հայրենիքի սահմանները: Նա վրեժխնդիր է լինում հոր մահվան համար՝սպանելով Չմշկիկ Սուլթանին, կոտորում Յոթ թագավորների զորքը, որոնք ուզում էին սպանել Միհրին ու տիրել Սասունին:
Էպոսն ավարտվում է Փոքր Միհրի՝ Ագռավաքարում փակվելով: Սակայն դա վերջը չէ, դա սկիզբն է սպասումի: Ժողովուրդը հավատացած է, որ կգա այն օրը, երբ իր սիրելի հերոսը դուրս կգա Ագռավաքարից, կշտկի աշխարհի ծուռը, ու չարը ծնկի կգա Թուր Կեծակիի առաջ : Էպոսի վերջին ճյուղը սպասումի ճյուղ է, լավի ու լավատեսության ճյուղ:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների միջոցով: Քանի որ աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նաև նրանց անձի ձևավորման գոր_ ծում:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար հայ գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի նյութեր է ներկայացնում: Այդպիսի հրաշալի օրինակներ են հայ ժողովրդական էպոսը՝ <<Սասունցի Դավիթը>>, Դ. Դեմիրճյանի <<Վարդանանքը>>, Մուրացանի <<Գևորգ Մարզպետունին>> ,

Մ. Խորենացու <<Հայոց պատմությունը>> և այլն: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը,ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Անհրաժեշտ է, որ այս ամենն ավանդվի ժամանակակից սերնդին, սերունդ, որը վաղվա օրը կերտողն է, ազգայինի , ավանդականի պահապանը, ժառանգորդն ու փոխանցողը: Ազգային այս կարևոր խնդիրը հաջողությամբ է իրականացվում ժողովրդական ստեղծագործություններում՝հեքիաթներում, առասպելներում , առակներում, զրույցներում և հատկապես հայկական ժողովրդական <<Սասնա ծռեր>> էպոսում: Էպոսում ոչ միայն դրվատանքի խոսքեր են ասվում քաջին, ազնիվին,վեհին ուհայրենաերին, այլև դատապարտվում է վախկոտն ու սնապարծը, ով էլ որ նա լինի : Այդպիսին է Վերգոյի կերպարը, որը, չնայած Սասնա տոհմից է, բայց վախկոտ է, անպատկառ: Այդպիսի կերպար է նաև Սառիեն՝ Զենով Հովանի կինը, որը, օգտվելով հանգամանքից, փորձում է խցկվել Դավիթի անկողինը: Այս հանգամանքը ասացողների կողմից հատկապես ընդգծվում է՝ ցույց տալու համար այն փաստը, որ Սառյեն ուրիշ զարմից էր, մինչդեռ ամեն մարդ իր զարմից պիտի ընկեր ընտրի: Սա ևս հայրենասիրության մոտիվ է՝ ոչ այնքան ուղիղ ասված:
Հանձին<<Սասունցի Դավիթ>> էպոսի՝բարձր հայրենասիրության ու համամարդկային գաղափարների գեղարվեստական անթերի դրսևորմամբ հայ ժողովուրդը ստեղծել է անմահ մի կոթող, որ այսօր էլ ծառայում է առաջադեմ մարդկությանը սոցիալական, քաղաքական ազատագրության համար մղվող պայքարին:

Եզրակացություն

Հայրենասիրության թեման եղել և մնում է գեղարվեստական գրականության կարևոր թեմաներից մեկը: Այն կարևոր նշանակություն ունի ապագա սերնդի հայեցի դաստիարակության համար: Անուրանալի է <<Սասնա ծռեր>> էպոսի հայրենասիրական դաստիարակության դերը երիտասար սերնդի համար: Էպոսի յուրաքանչյուր հերոս իր խիզախությամբ, իր կյանքով ու անձնազոհ արարքներով օրինակ է ծառայում ընթերցողի համար: Էպոսն ուսումնասիրելիս աշակերտները ծանոթանում են հայ ժողովրդի՝ հարյուրամյակների ընթացքում ձեռք բերած հաջողություններին, ստեղծած արժեքներին, սովորույթներին, ավանդություններին: Էպոսի ամբողջական ուսումնասիրման միջոցով յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա՝ որպես հայ, ո՞րն է իր անելիքը իր հայրենիքում, ազգային գաղափարախոսության միջոցով հասատի իր առաքելությունը, որտեղ ամենակարևորը հայրենիքը իրական սիրով իրելն է: Հենց այս նպատակն իրականացնելու համար պետք է իմանալ, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Ժողովրդական իմաստությունը կուտակվել է դարերի ընթացքում և այն, էլ ավելի հարստանալով ու կատարելագործվելով, փոխանցվում է սերնդեսերունդ: Ժամանակն իր կնիքն է դնում տեղի ունեցող իրադարձությունների վրա: Հայ ժողովրդի էպոսը ևս, գալով դարերի խորքից, իր մեջ է հավաքում այն ամեն լավը, գեղեցիկն ու օգտակարը, որը պետք է ներկայացնի սերունդներին մեր ժողովրդի իրական էությունը, բնավորությունը: Եվ, ընդհակառակը, այն, ինչը խորթ ու անհարիր է մեր ժողովրդին, մերժվում է, դատապարտվում:

Գրականության ցանկ

Ա. Ամիրջանյան, Ա. Սահակյան,Մանկավարժություն, Երևան, 2005

Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1974:

Ն. Տողանյան, Թ. Թովմասյան, Լ. Գրիգորյան, Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան, 1912:

<<Սասունցի Դավիթ>>, Հայկական ժողովրդական էպոս

Бабанский Ю. К.,Оптимизация уч.-воспитат. процесса. метод. основы, М.,1982:

Ушинский К. Д., Педагогика,